



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻՒՄ ԸՆԴԱՐԱԹ 24 ՅՈՒՆԻՍ 1865

ԹԻՒ 758

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՍՈՒԹԻՒՆ

ԶՄԻՌՆԻՒՄ 24 ՅՈՒՆԻՍ

Անգղիոյ մէջ անգղիական երեսփոխանաց ընտրութիւնները լրջնալով վերայ են, և մինչև ցայսօր ընտրուած երեսփոխանաց մեծագոյն մասը կառավարութեան կուսակցութեանը կը վերաբերի, այսինքն ազատասիրական են: Հետեւաբար տարակից չկայ թէ լորտ Բէլմըրսթընին նախագահութեամբ հաստատեալ պաշտօնէից խորհուրդը կաշիւի միտքը ըլլայ տակաւին երկար ժամանակ շարունակել իւր միջոցները: Թէպէտ անցեալները զրոյցուեցաւ թէ յիշեալ անդուական լորտը՝ իւր անձնական տկարութեան և իւր ծերութեանը պատճառաւ, քաղաքական գործերէ պիտի քաշուի, բայց կերեւի թէ այս գրոյցուածը բոլորովին անհիմն է:

Լորտ Բէլմըրսթըն երկար տեսնախօսութիւն մի ըրաւ ինչպիսիք քաղաքին մէջ որուն բնակիչները վերապահ իրենց երեսփոխան ընտրեցին զՆորթհամպթընը: Անտրուական լորտը իւր ընտրուեցաւ առջեւ գրաւ կառավարութեան խոհմ ու յաջող ընթացքը վեց տարին ի վեր՝ յորմէ հետէ անոր գլխաւոր անդամը կը դառնար, և յաւելցուց թէ նոյն միջոցին մէջ անգղիական ազգը մեծամեծ յաւանքով մտնութիւններ ըրաւ թէ ի մասին ներքին բարեկարգութեանց և ազգային հարստութեան և թէ ի մասին պատուի և օրինաւոր ազգեցեալութեան՝ գործ ձեռք բերաւ օտար տէրութեանց առջեւ: Վերջապէս լորտ Բէլմըրսթըն իւր սովորական ճարտասանութեամբը այնպիսի գեղեցիկ դոյներով նկարագրեց ազգին վիճակը և կառավարութեան քաղաքականութիւնը, որ իւր ընտրուեցաւ ծափահարութիւնները և կատարեալ վստահութիւնը ստացաւ:

Թէպէտ Աւստրիոյ և Բուլղարիոյ մէջ եղած քաղաքական յարաբերութիւնները երթալով կը ցրտանան զանազան պատճառներով, այսու տոնային երբեք չկարծուի որ կոխ մը բացուելու չափ ծանրանան մանաւանդ որ կը տեսնենք թէ Աւստրիոյ կողմէ:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԻՆԳԵՐՈՐԴ

ՎԻՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Սրբազան Եպիսկոպոսաց սրբոյ Ամենափրկեան վանաց նորոգողայտու, հանգերմ հակիրճ ծանօթութեամբ ժամանակաց են երեսփոխործոց նոյնին:

Ըստ ինչոյ որոնց, աշխատասիրեալ Ղերապատիւ տեառն Յովնանու խաչկեան՝ խաչակիր անապ երիցուն Հայոց են Ասպետի ի Կալիարա(4):

Ա. Ըստ վրացից Առաքելի պատմիչի և ճառից խաչաւորոյ վարդապետի խոստովան Չուղայեցոյ, յամի Տեառն 1603, մինչ ի Եւս Արքայաց տաւաճոյ արքային Պարսկոյ ի Հայաստանաց գերին Հայք ի Պարսկաստան, այն է Արազ կիսէ ոչ չը, տեղի տանուն Չուղայ՝ յայն կոյս գետոյն Չանդարուտոյ, որ անկանի ընդ հարաւով, առորոտով լերին, Առաջորդէր նոյա Մարութը հիւսկ համրոյր հայկական, որ յետ ամաց կատարէր զընթացս իւր ցաւք տարագրութեան ի պանդուխտ վայրին:

Բ. Տէր խաչատուր Կատարայի՝ երանաշնորհ եպիսկոպոս:

(4) Կալիարայի մեր մեծարգոյ բարեկամներէն մեկը յուղարկած է մեզ այս յոյսածը՝ խնդրելով որ ի յոյս ընծայենք զայն Արշալուստայ միջոցաւ: Յիշեալ ազգային անձին խնդիրը յօժարամիտ յանձնառու կըլլամք կատարելու: Ըստորում մեր ընթերցողաց ուղարկութեանը արժանի կը համարուի այս պատուական գրուածը: որ նորոգողայտու ազգային գլխաւոր անցքերուն ճշգրիտ պատմութիւնն է:

սեր որոշմամբը վերանային մէջ գտնուած զօրաբանակէն տասը հազար հոգի նուազեցաւ, և հետզհետէ պիտի նուազի: Կը հաստատեն թէ Գաղղիոյ յորդորանօքը խառնան ևս իւր պատրաստ զօրաց թիւը պիտի պակսեցնէ, և գուցէ այս օգտակար օրինակին ուրիշ տէրութիւններն ևս հետեւին:

Հունգարիայի մէջ կերեւի թէ քաղաքական հաստատութիւնը շուտով պիտի չլինայ հաստատուել: Բանդի ազատասիրական կուսակցութիւնը, որ զօրաւոր է, օր ըստ օրէ իւր պահանջներն կ'աւելցնէ, և գուցէ այս բանը արդեւ մի ըլլայ մարդասիրական յօժարամտութեանը՝ որով Ֆրանչիսկոս Զոլմսթէի կայսրը պատրաստ է ընդունել ի գործ գնել Հունգարացուցանման օրինաւոր խնդիրները:

Գիտեալ արժան է որ Սպանիոյ կառավարութիւնը շատ ժամանակէ ի վեր կը փափաքէ ճանաչել ընդունել իտալիոյ թագաւորութիւնը: Բայց ի շնորհս Հոմի սուրբ պահէին կուսակցութիւնը զգործադրութիւնը իւր գիտաւորութեան: Սպանիոյ երբոր տեսաւ թէ նոյնինքն սրբազան Պապը սկսաւ բանախօսութիւն ընել իտալիոյ թագաւորին մէկ երեւոյթիս հետ կրօնական խնդրոց վրայօք, յայնժամ Սպանիոյ արտաքին գործոց պաշտօնէաց մօսիւ Պէրմուտէլ տը Բասթրօ փութացաւ գրելու Հոմի գտնուող իրենց գետնային, ծանուցանելով անոր թէ իրապէս թագաւորութիւնը կ'աւելցնէ իրենց ճանաչել իտալիոյ թագաւորութիւնը: Բայց այս ծանուցման քով հետեւեալ տողերն ևս գրուած էին: «Երբոր սուրբ պահէ իւր խորին իմաստութեամբը և իւր մեծ խոհմութեամբը հարկ համարեցաւ բանախօսութիւն ընել Վիքթոր-Էմանուէլ թագաւորին մէկ երեսփոխանին հետ վասն կարգադրութեան կրօնական խնդրոց իտալիոյ նոր թագաւորութեանը մէջ, չլինար զարմանալի երեւալ Հոմի սուրբ Գահին, որ հասարակաց կարծիքը՝ այսինքն բոլոր ժողովուրդը թանաճանօք կը խնդրէ որպէսզի Սպանիոյ կառավարութիւնը իւր քաղաքական յարաբերութիւնները վերահաստատէ նոյն իտալիոյ թագաւորութեան հետ»:

պոս, նոյնիսկ սրբոյ Էմմանուէլ որ եկեալ ի Չուղայ տակաւ խաչկեալ պիտի սրբաւոյս մեռնի, և միտնալով ըզվտազնեալ հօտն Բրիտանիոյ՝ ըստ ինչոյ ժողովրդեան նստի յաթոռ առաջնորդութեան: սա լցեալ երկնային շնորհք և իմաստութեամբ, հմուտ ազատական և բնականացական մակարդակեանց՝ յորմէ զօրաւոր Աստուծո ծառանական՝ բարեյական՝ տրամաբանական և ճարտասանական գրեանք, հաստատեալ զմարդարան՝ հրահանգէր զարգումն ներքին և արտաքին գիտութեանը: Զմին յաշակերտաց իւրոյ Յովնանէս վարդապետ՝ առաքէ յառաւիժ վրան ուսանելոյ զարուեստ տարագրութեան՝ և ընդունի անոր գիտելու կարգաւոր զաթուրթայս և մեքենայ տարագրութեան, և ինքն անգլոսին աշխատասիրի յարուցանել զգործիս տարագրութեան՝ որում յաջողեալ վրան ժողովոյ տարագրէ նախ զհարանց վրա յամին 1664: Ի վերջոյ անոր զմեքենայ տարագրութեան, որով տակն զպարզաւորմարս յամին 1647. տակայն վերջինս ոչ այնքան մարտ, որչափ առաջինս առ յինքնէն յորինեալն, բայց տարաբաղդապէս հեղինակն նախանձելի բարեաց, յամին 1645 կնքէ զմահականաց վրանին ի լինեցալէս, և սրանց առ յոյսն բնակցի Բրիտանոս:

Գ. Տէր Գալիթ հրեշտակաւորն հայկական, հրամանաւ Եւս Արքայաց երկրորդէ արքային Պարսկոյ, յամին 1656 հին արեւել շինութեան Ամենափրկեան սուրբ վանաց, և յամին 1663 ինն ամաց աշխատասիրութեամբ կանգաղեալ զինուածն յամրով հանէ, որ և հաստատեալ զաթոռ մտտարարութիւն որ կայ մինչ ցայսօր ի զարմացումն տեսողաց, որոյ վառայի և չընաղ տեսարան վայելչաւ:

Այս քանի՞մը տողերը սուրբ Գահին պատուոյն դպան և Անգլոսէլի կարգինալը թշնամանք մի համարեց զանոնք: Եւ որովհետեւ շատ մարդիկ կը գտնուին, որոնք քաղաքական սրբազան Պապին ընթացքը՝ Վիքթոր-Էմանուէլին հետ համաձայնելու համար, այժմ Սպանիոյ արտաքին գործոց տեսչին դրած խօսքերը յառաջ բերելով Պապին որոշման ցաւայի հետեւութիւնները կը ցուցնեն:

Սպանիոյ տէրութեան իտալիոյ հետ քաղաքական յարաբերութիւններ հաստատելու առթիւ Հոմին գրուած նամակ մի հետեւեալ խօսքը կը պարունակէ:

«Խամանակը և տեղի ունեցած դէպքերը կ'աւելցնեն ամեն օր զթիւը այնպիսի անձանց, որոնք թէպէտ երբեք չեն անձնանուէր են Պապին՝ սակայն անհնար կը համարին անցեալ քաղաքական կացութե վերադարձը, նմանապէս աւելի անհնար կը համարին իտալիոյ ըրածները արեւել և անհետ ընել: Սիւն նոյն անձինքը կը շատ բաղաւոր պիտի ըլլայ սուրբ Գահը եթէ կարող ըլլայ անմաս պահել անձնան ունեցած իւր երկիրները: Վերջապէս չեն ուզեր ինքզինքնին խաբել, ինչու որ շատ աղէկ կը տեսնեն թէ իտալիոյ թագաւորութիւնը մեծագոր է, հետեւաբար կը տեսն թէ Հոմի սուրբ Գահը պէտք է որ միայն իւր իրաւունքը պաշտպանէ և ամենին հոգ չտանի թէ Կաթոլիկ և Ֆրոնթիսցայի մէջ վեհապետական դահը Վիքթոր-Էմանուէլը նստած է, թէ Ֆրանչիսկոս երկրորդ կամ Էմմանուէլ երկրորդ»:

Վրաստանի մէջ Հոմի կառավարութիւնները և իտալիոյ մէջ ի կախ մնացած բանախօսութիւնները շուտով պիտի նորոգուին և շատ չանցած համաձայնութիւն մի պիտի հաստատուի յիշեալ երկու կառավարութեց մէջ: Այս համաձայնութիւնը թէպէտ անայժմ կրօնական խնդրոց համար պիտի ըլլայ, սակայն ընդհանրապէս կը յուսացուի թէ պապական կառավարութիւնը վերջապէս պիտի պարտաւորուի քաղաքական յարաբերութիւններ ևս հաստատել իտալիոյ թագաւորութեան հետ:

Թէպէտ մօտեքս լրագիրը ոմանք հրատարակեցին թէ Գաղղիոց կայսրը նորէն առաջարկութիւն մի

հիւս խորհուրդուր և ոսկերի նկարք հիպոպոսնէն զհետադուրս: Սոյն այս Գալիթ հանգոյն նախորդին մեծարկութն ձգտման, համարի երկրորդ հեղինակ պայծառութեան Չուղայու, և լուսաւոր Ստուածաբանութեամբ բարդաւանման լուսաւոր հօտին յորէն Ստուածային գիտութեան ուստի համապատիւ նախորդին իրեւ ամրոց հաւատոյ՝ և անդուական երախտաւորաց Չուղայու, յաւերման յիշատակաց վերադասեալ զորոց անուանք մինչ երկ և յետանքն ի համարէն թեմս վանաց՝ յորդս զհոգիական սրբոյ պատարագին յիշէն, որչափ այժմէն ուրեք ուրեք բացալեալ ի նորոց, (ըստ որում չէր տուալ գրեալ ի հասարակ ժամադիրս), բայց զՉուղայուն բուն հորիզոնի չգիտեմք շնորհ թէ նոյնութեամբ բարձի թողի արարեալ արդեօք, և ինքն տէր Գալիթ՝ հրաժեշտ առեալ ի կենաց, յամին 1683 թաղի ի ներքնայարկին եղաւ նոյ սրբոյ տաճարին:

Գ. Տէր Ստեփաննոս հայկական՝ որ զինի բազում տաւապանաց Եւս Արքայաց արքային Պարսկոյ, ըստ ինչոյ կալիսկոպոսաց Էմմանուէլ՝ առ կենդանութեամբ Եւս հապետ կաթոլիկոսի հրաւերի յաթոռ հայրապետութեան (ի հաստատման Չուղայու) ըստ պատմագրութեան Սրբաճամու կաթոլիկոսի, տես ի պատմագիրս նորա, կաթոլիկոսութեան Էմմանուէլ ընտրէն միայն հաւանութեամբ կոստանդնուպոլսոյ և Չուղայու Հայոց՝ որպէս և թուի այս կարգ ձեւալ մինչ ցաւք Երեմի կաթոլիկոս) որ և համոզեալ, զիւրազայթ մառօր յանձն տանու, և ի ժողով ի կողմնականաց Նահապետ կաթոլիկոսի զհաւաքեալ մասին ի բանտ, և զինի մեծի տուգանաց և շարաշար հարուածոց՝ վախճանեալ յամին

ըրեք է Լաբոպայի մեծ տէրութեանց որպէսզի ար. քայաժողով մի գումարուն 'ի կարգադրութիւն քա. զաքական զլիաւոր խնդրոց, սակայն 'Կաղղիոյ Սո. նիթէօր. անուն պաշտօնական օրագիրը սուտ կը հանէ այս լուրը :

Նաբոլէոն կայսրը Յուլիսի 7-19ին հասաւ 'ի Բլոնայիէն, ուր հանքային ջուրերը մտնելու հա. մար 40 օր պիտի մնայ կըսեն :

Փարիզի մէջ կը զընդունի թէ Մարիս Գաւոր Դէլիսին մեծ պաշտօն մի պիտի տրուի Ճէզայիրի նա. հանգին մէջ : Յայտնի է որ մտերս Գաղղիոյ կա. ուսմարութիւնը նոր օրէնք մի հրատարակեց . որով Ճէզայիրի մահմէտականները եթէ ուզեն Գաղղիոյ հպատակութիւնը ընդունելու Գաղղիացի հպատա. կաց մատենաւ արձանագրուիլ, իրաւունք պիտի ու. նենան ամեն պաշտօններու մտնել իւրեւ բուն զաղղիացի մի : Արհաստատեն թէ Մարիս Գաւոր Դէլիս միտք ունի Գաղղիոյ հպատակութիւնը ըն. դունելու : Հետեւեալ տարակոյս չկայ թէ մեծ պաշ. տօն մըն ալ պիտի յանձնուի անոր Ճէզայիրի մէջ :

Փարիզի քաղաքական խորհուրդը (միւնիստիֆալի. թէ) 250 միլիոն ֆրանքի փոխառութիւն մի ըրաւ, զոր յիշեալ մայրաքաղաքին վերայ յաւելցած նոր թաղերուն շինութեանը և ուրիշ հրապարակական օգտակար շինութեանց համար ծախք պիտի ընէ :

Փարիզի մէջ 1867ին ըլլալու մեծ արուեստահան. գիտնի յատկացեալ ապակեայ պալատը ևս սկսաւ շինուիլ : Այս պալատին երկայնութիւնը 750 կան, զուն և լայնութիւնը 600 կանդուն պիտի ըլլայ, ու շէնքը սքանչելի բան մի պիտի ըլլայ կըսեն :

Բաթրի լիադրոյն մէջ հետեւեալ կը կարգաւորէ .

«Հիմնաւոր պատճառներ ունիմք, հաւատարմութե. արդէն Փարիզի ու Սաթրիսի մէջ զաւարտեան 'ի վե. րայ հաւանականութեանը տեսութեան մի, որ տեղի պիտի ունենայ 'Կարոլէոն կայսրի և Իդապէլ թա. դուհւոյն մէջ : Արտուի թէ 'Կարոլէոն երրորդին Պիարից քաղաքը դտնուած ժամանակը, Օգոստոս. ամսոյն վերջերը պիտի ըլլայ յիշեալ տեսութիւնը այսինքն հասի Գաղղիացւոց կայսրը Սէն-Սէպաս. թիէն պիտի երթայ այցելութիւն ընելու Սպանիոյ թագուհւոյն, և Սպանիոյ Իդապէլ թագուհին ալ քանի մը օր ետքը Պիարից պիտի երթայ 'ի փոխա. դարձ այցելութիւն Գաղղիացւոց կայսրին» :

Ըմբիկայի Միացեալ-Մահադներէն նոր լուր մի չկայ : Ինքնօն նախագահին սպանման դրոժակից եղողներէն չորս անձինք 'ի մահ գատապարտուեցան և Յուլիսի 7ին ըստ նոր տուժարի կախուեցան : Այս մահապարտներէն մէկը կին մըն էր մատամ Սիւրէթ անուն :

Հարաւային Ըմբիկայի վիճակաց մէջ, ուր գերու.

թիւնը ջնջուեցաւ, երկրագործութեան և ուրիշ աշխատութեանց նոր կարգադրութիւնը շատ դժ. ուարաւ կը ըլլայ : Ուստի երկրագործներէն շատերը կը կարծեն թէ անկարելի է աշխատութեան նոր դրութեամբը բամպակի հունձ մի ունենալ այս տարի. անոր համար Հարաւային Վարօլինայի ներքին կող. մերը եղած բամպակները մեծ խնամով կը պահեն, տարակոյս չունենալով թէ նոր հունձին բամպակ պիտի չըլլայ :

Ա. Գ. Ա. Յ. Ա.

Սուրբ Երուսաղէմի Պատրիարք ամենապատիւ տէր Եսայի սրբազան արքեպիսկոպոսը, ըստ արամա. դրութեանց սուրբ Յովորայ վանուց նորահաստատ կանոնադրին, յիշեալ վանուց միաբաններէն ընդ. հանուր ժողով դուժարելով, դադարի քուէարկու. թեամբ Տնօրէն խորհուրդը հաստատեք է . որուն անդամները հետեւեալ գերապատիւ եկեղեցական. ներն են :

Իսահակ եպիսկոպոս, նախորդ փոխանորդ սրբոյ Աթոռոյն 'ի Ա. Պօլիս :

Արարպետ եպիսկոպոս, աւագ լուսարար, Յակոբ եպիսկոպոս, Ղուկաս վարդապետ, Ներսէս վարդապետ, Աստուածատուր վարդապետ :

Իւթիլէմի մեծ ուխտատեղի մը կայ որ Քառասնից. այլ կը կոչուի և 'Հին ժամանակաց հետէ երեք աղ. ցայ' այսինք Հայոց, Յունաց և Լատինաց կը վե. րաբերի : Սակայն Երուսաղէմի Լատին միաբանու. թիւնը անցնելու երբ 'փորձ 'փորձեք 'ի իրենց 'սեփա. կանեւ յիշեալ այլը . և այս նպատակաւ անոր մէջ շինութիւն մի ընելու ձեռք դարկեր է : Հայոց և Յունաց վանքը լսելով այս բանը, փութացեր են տեղակիւս կառավարութեան միջոցաւ արդիւն ըզ. շինութիւնը, և փառաբանայն բողոքեր են Լատինաց միաբանանութեան այս ապօրինաւոր ընթացքին դէմ :

Ղաւաթաւանի մատենաւ, որուն կը նախագա. հէր Երուսաղէմի ընդհանուր կառավարիչ վսեմափայլ Թիլէթ փաշան, թէպէտեւ ճանչցաւ Հայոց և Յու. նաց ունեցած համատեղութեան իրաւունքը նոյն այ. րին վերայ, այստեւ ամենայնիւ տակաւին վճիռ մը չէ տուած :

Այս միջոցիս, Լատինաց միաբանութեան զլիա. ւոր անգամ և քարաւզար՝ Հայր Ռէմիճիօ Պու. զէլի վերապատուելին իտալերէն լեզուաւ տետրակ մի 'կը հրատարակէ . որուն մէջ կը լսուի հաստատութե. Քառասնից այլը 'ի սիլլաբանէ անտի իրենց ստաց.

ստիճանն վախճան ընկողնու յամին 1729 :

Թ. Տէր Պօլոս եպիսկոպոս՝ որ յետ ոչ բաղձով ժամա. նակաց ընկելիկ լինի յառաջորդութեան :

Ժ. Տէր Զարաթիա եպիսկոպոս Տիփսիայի՝ համահան. զոյն նախադրին խրոյ :

ԺԱ. Տէր Գլորիա Զուլայիցի՝ քաջակորով վարդապետ, նախորդ Ամենախիչեան վանաց՝ 'ի Բաքայ ընտրի յա. ռաջնորդութեան Զուլայու, ուստի ելեալ յԵմիմին, ընկալնու զատիճան եպիսկոպոսութեան. վերադառնայ 'ի յայրենիս, ուր և դամ բաղձով բարեպետ կառավարեալ զաթոռ և զհօտն բանաւոր՝ փոխի . . . յաստեաց յամին 1768 :

ԺԲ. Տէր Միքայիլ Զուլայիցի՝ 'ի դոստակարգէ աշ. խորհրդան եկեղեցականաց, յետ կորուսանելոյ թագին մորմնաւոր՝ հոգեւորականին լինի ժառանգաւոր, լիաւ և պիսկապոս և առաջնորդ տանն Զուլայու, գտանի և քան զամենայն նախորդին վատարաստիկ. զի յաւուր սորա. յաճախեալ չարեաց 'ի տեղական կառավարութեանց, խառնի իշխանութիւնն . ուստի խառնութիւնն փոխանակ պաշտօնականելոյ զժողովուրդն և զէմ զնկոյ չարաց 'յառ. նէ և ինքն 'ի կապուտ կողպուտ և 'ի լկանս հասարա. կաց, տուգանի Զուլայ անողորմելի սպառնալիք, ու կի՛ արծաթ՝ պղինձ՝ երկաթ, տաշ՝ աղջիկ՝ մշակ՝ բեռնա. կիր և այլն . սորին վասն ստի՛ 'ի միում զիշերի հարիւրա. ւոր ամուրեաց գտեալ պսակ, հարուն մի հարուստ պատկի ընդ աղքատ փեսայի և մնայ նորա՝ ժառանգութիւն բաղդի, և ոչ այսչափ միայն այլ ինքն առաջնորդ, կա. լուսաւորեալ մատնի 'ի գանս անողորմ և 'ի հարուստ

ուսանէ : Այս թէպէտ յառաջ բերուած փաստերը տկար և անհիմն են, սակայն Հայոց վանքին կող. մանէ պատասխան մի տրուիլ արժան համարուեր է :

Այս պատասխանը 24 երեսէ բաղկացեալ տետրակ մըն է, սուրբ Երուսաղէմի վանուց զործարանը տպեալ 'ի 17 Յունիսի՝ հրամանաւ ամենապատիւ տէր Եսայի սրբազան Պատրիարքին և հաւանութիւ. Տնօրէն ժողովոյն : Իսկ տետրակին հեղինակն է. Ս. միւնացի պարոն Տիգրան Հ. Թ. Ս. Սափալանեանց լեզուադէտ պատուելին . որ Ս. Երուսաղէմի վա. նուց ուսումնարանի տնօրէն, ու գտաւոր է հայ. կարանութեան և միանգամայն քարաւուար սրբոյ Աթոռոյն :

Յիշատակ զիտնական հեղինակը, իւր սովորական ազգու զրիշով, Հայր Պուլէլիին յառաջ բերած տկար փաստերը զօրաւոր ապացոյցներով և վկայու. թիւններով հերքած է և Լատինաց վանքին ըրածը յափշտակութիւն մի ըլլալը յայտնած է :

Արժանայարգ պարոն Սափալանեանց պատուելին իրատ ուշիմութեամբ յառաջընթերէ Հ. Պուլէլիին հետեւեալ սպառնալից խօսքերը, որով մեր հակա. ռակորդին ինչ սնապարծ բնաւորութեան տէր ըլ. ւալ կը յայտնուի :

«Պիտի գրեմ՝ ու իմացնեմ, կըսէ, տէրութիւն. ներուն . թէ լատինք ուղիւղ տեղի մեծ խնամք ու պայծառութեամբ պահպանել այս սուրբ տեղը, Յունաց և Հայոց քաղաքաւոր կրօնաւորները, քա. լեպաշ և պիսկոպոսները և Պատրիարքները կուզեն որ զիշերն ալ քայ մնայ որպէսզի անստուններուն իրր փխտ ծառայէ ու զօղբուն և չարագործներուն ապաստանարան ըլլայ» :

Ժամանակ անուն հայրենաւորէր հանգիսին 65 թուոյն մէջ հետեւեալ կը կարդար :

ՇԻՋԱԲԵՐԱԿԱՆ ՄԸ

Չորս տարուան մնացած տրոց 'ի հաշիւ նուէր մը պահանջելու համար, Քաղաքական ժողովոյ ըրած որոշմանը համեմատ հետեւեալ շրջաբերականը պիտի ուղղուի բոլոր աղայնոց :

«Մեծապատիւ տէր,

«Քաջ գիտէք որ չորս տարի 'ի վեր աղային ընդ. հանուր տուրը Վարչութիւնը չկրցաւ ժողովել և քայ 'ի թերհաշիւ ամսուած 75 զուրուշէ որ ոմանք տուին երեսփոխանական ընտրութեան ժամանակ, զրեթէ ասկից 'ի զատ իր աղային տուրը՝ Աղղին Աղղոնա. կան անտուկը ստակ մնած չէ : Թէոր մէկ կողմն ըստ որոշման ընդհանուր ժողովոյ յառաջիկայ տարուան հա. մար սահմանուած տուրը պիտի ժողովուի, միւս կողմն ալ աղային իրտուները կուզէ որ անցեալ չորս տար. ուան համար տվն մէկ անհատ իւր կարողութեանը հա. մեմատ իր ընդհանուր տուրը բան մը վճարէ : Այս

չարաչար, մինչ անգամ՝ հաճեալ ի կաթնայ եռաց. եալ ջրոյ խորշատիլ, բանին պահանջութեանց և և կեղեցեաց, կողպուտին սրբազան սպար և զարդք տու. ճարաց պրոց՝ սուրոյ և արծաթոյ, և 'ի ժողովրդոյ՝ զոյս և զկարկա և յայնմ՝ հեռէ զոգջիլ բեկեալ ողբ. կենդանութեան և բարեկեցութեան Զուլայու՝ յանել յառն վերանորոգութեան չկարէ, և ժողովուրդք վեր. ջտանալ և ձեռնթափ յամենայն տրեք լինին թափա. ռական . և այն պանծային Զուլայ՝ որ երբեմն 24000 ճոխ և փայլեալ տուրք դնէր չուք աղպութեանս, սերկեանս տուր՝ իրեւ 310 ճուրաղ տուրք՝ յաղքա. տիկ կեանս տուարի . իսկ ինքն Միկտի, առաջնորդ՝ յետ զիրման 'ի բազմաչարչար նահատակութեան, բարի մահուամբ փոխի յանանց երանութիւն, լիալ ժառան. գաւոր ջերմ արտասուտայ համբէն ժողովրդականաց, թողու և 'ի գգալի յիշատակաց մին՝ փորաւէն անուան. եալ Աղղին մեծ՝ որ մինչ ցայսօր՝ իրեւ կառուածք վա. նաց, առատ արողովք միսթարէ գլխաւ :

ԺԳ. Տէր Յակոբ եպիսկոպոս՝ (այլ զանաճ ժանս և բարբաբոս) որ յետ քանի ամաց անխնամ առաջնոր. դութեան և վեան մեծ գործերն վանայ և ժողովրդան, բռնաբար յարձակի յեկեղեցիս Զուլայու կրպտէ կողպ. տէ վնասցորդ և վթազուցեալ ոսկեայ և արծաթեայ ըս. պատ և դարդս, Ս.Ք. խաշ՝ սկիւ, բուրուսա՝ սկուտեղ, տապանակ, մասնատուրի եայն, չուէ կանն 'ի Հոլիկա, ուր 'ի Մարդաս քաղաքի վախճանեալ թագի 'ի գտթի եկեղեցւոյն՝ յամի 1794, որոյ տապանաղբին ուղաւոր ճառէ զթիւս առաջնորդայ Զուլայու վանոց՝ յինքն, և

1695, թաղի 'ի խոր վերապի :

Ե. Տէր Աղեքսանդր Զուլայիցի՝ ճգնակի և խտտակոն եպիսկոպոս, որ յետ քանի մի ամաց տօնելի առաջնորդու. թեանն՝ հրախիլ 'ի պատու հայրապետութեան լուսա. կերտ դահի սրբոյն Միանձնալիլ, յաջորդութիւն Մահա. սկոս կաթողիկոսի՝ յամին 1715 :

Զ. Տէր Մովսէս Զուլայիցի՝ վեմադոյն եպիսկոպոս, յորոյ աւուրս տիրեն Աղուանք Սպախան քաղաքի, և հարուածս բաղձով հեղուն 'ի բնակիչն՝ ընդ որս և ոչ ա. կաւ վնաս Հայոց Զուլայու, և ինքն տէր Մովսէս կառա. եալ զընթացան նեղեղութեան՝ բարի մահուամբ զրաւի 'ի կենաց յամին 1724 :

Է. Տէր Դաւիթ երկրորդ՝ եպիսկոպոս, ոյր քաղցրա. քայոյ խտտակոն և ոլորմած, զատեալ և մեկնեալ զլիա. վին յամենայն աշխարհական ցանկութեանց՝ տրնի 'ի պայծառութիւն տանն Աստուծոյ, և յիմաստութիւն առ ինքն յանն եղեալ հատին, և ոչ նուազ քան զանուա. նակիր նախորդն եւանդոտ՝ առնէ զշինութիւնս բաղձով. սա՝ յաղճապարք չքեղապրեցանէ զուրբ տաճարն, 'ի ստորոտէ յատակացն մինչ ցերիս կանգունս որմոյն, և 'ի 'զլուս յաղճապարկաց՝ տայ նկարել զպատկերս չարչարա. նաց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին, զգեղելի և և զոսկեղծ ծագիկս երկնափայլս, որովք յոյժ պայծա. րացեալ զարդարի տունն Աստուծոյ, զարդարի և ինքն անմահ յիշատակեք, յաւելեալ ընդ հարս իւր՝ յամին 1727 :

Ը. Տէր Աստուածատուր եպիսկոպոս՝ որ ըստ միամիտ քարոյն, կամ ըստ ոմանց յարուցանելոյն զաղաւնի մի. խորշակ՝ մոկանայնեալ Ս. Գլուսի, յետ երկամիայ տնտե.

մասին Քաղաքական ժողովը որոշեց ազգայնոց խզնին դիմել, և այս չորս տարուան դիմումը պարտադրեց լիտվական նուէրը խնդրել առանց գումար որոշելու:

«Այս ապա դիմումը այն չըջարեալանքը ձեր մեծապատուութեան կուղղեմք, և ինչ գումար որ ձեր ազգասիրութիւնը և խիղճը յարմար կըզատէ, ներփակեալ տոմսակին մէջ նշանակելով և ստորագրելով նոյն տոմսակը առ մեզ դարձնէք թուականէս մինչև աւստին մը: Այս պայմանաւորով լրացուցաւ պիտի հրատարակէ քական ժողովը լրացուցաւ միջոցաւ պիտի հրատարակէ այն չըջարեալանքին պայմանը իր մանրամասն պարագայներովը, և այս արդիւնքը տեսնելով՝ Վարչութիւնը ըստ այնմ պիտի անորինէ ազգային մէջ:

«Ելլաւ ամբ ձեր ազգասիրութեանն որ այս սրտական պարտքը ժամանակէն կրկնատարէք: որով ձեռն առն պիտի ըլլաք ազգային Վարչութեան իւր ծանր պաշտօնը արդիւնաւոր կերպիւ կատարելու և միանգամայն պիտի ազատէք ազգային հաստատութիւնները և նոյն իսկ Վարչութիւնը այս ցաւալի միջոցէն:

«Յունիս 1863»:

Այս շրջաբերականը հրատարակելէ ետեւ, յաւանակը իւր կողմանէ ալ հետեալ յորդորը կը յաւելուէ՝ «զոր քիչ մը սաստիկ յանդիմանութեամբ կըվերջացնէ:

«Վըհրաւիրեմք ամեն ազգայինները, որ Վարչութեան ձայնին լսելով խղիղեալ նուէրը հաստատեն յոժարութեամբ և լիքով կուգանք որ Վարչութեան նախագահը զործարարութիւնը, Վարչութիւնը քայլէ ազգը յաստանայ, իւրաքանչիւրը իրեն ըմբռնելով իր կամ տուրքը պէտք է որ տայ: Ով որ չիլսեր այս ձայնին, ով որ անտարբեր կըլինայ, ով որ չըզգար լիցիւն ու Վարչութեան վիճակը, անիկա լիցիւն նախատինք ու ընտելող Հայ միջոցէն ան որ արդեւներ կըհանէ, խառնուս կըլլայ, ու չուղեր որ Վարչութիւնը կարող ըլլայ այս նուէրը հաւաքել, անիկա պարզապէս վատ է, ազգատենաց է ու Վարչութեան թշնամի:

«Ինչպես են ամեն բան պիտի ճանչուի՝ ազգականներն ու ազգատենաց պիտի յայտնուի, երբ իւրաքանչիւրին տուածը ու չտուածը հրատարակուի՝ լրացաւ միջոցաւ»:

Քաղաքական ժողովը այս նուէրին կամ տուրքին հաւաքմանը համար երեք երեւելի անձերէ բաղկացեալ մասնաժողով մի կազմեց և այս դժուարին պաշտօնը անոր յանձնեց:

Տնօրէնութեան որ յաջող վախճան մի ունենար, տակալն կըտարախուսէր: Վասնզի արդէն կըլսեմք թէ երեսփոխանական ժողովոյն անդամներէն ոմանք կըբողոքեն եղբոր ազգային Վարչութեան այս տնօրէնութեանը դէմ, յատկապէս բերելով թէ Քաղաքական ժողովը իրաւունք չունի ժողովրդէն ուր և է

ի համաձայնութիւն կտակին՝ առանց խրատ առ զուգայեցիս, չընդունել զոր Առաջնորդ յարապետը՝ որպիսի կը լինէ:

Չլինի ստուգել թէ յետ մահու նորին՝ ուր չքայան կողմաւորութիւն, արտաքին երկու արծաթեայ տէգի, որոյ մին կայ այժմ յիկիւղիյն հումարտ, և մին Չիլլու սուրբ Յովնանու՝ տարեալ ձմեռն պարտն Վարչութեան տէր Ստեփաննոսեան: Այս և յիկիւղիյն Վարչութեան տեսանի սկիւղ սկիւղ մեծ յիշատակաւորութեամբ լիք ընծայեալ Չուլլու Ստեփանիւղիւն վանայ, որ թուի առ ժամանակաւ միայնակ՝ ոչ ումիւր տարեալ հոգ յետադարձեցանէ անդ: Բայց թիւս յետոյ դարձեցեալ անդը չիցիւր այժմ ի գոյ, որչափ տեսանի արդէն:

ԺԳ. Տէր Յարութիւն Չուլլույն՝ կախիկաւոր, այր բարեմիտ՝ սակա չիլիւղ վիշտ ըստ նախորդաց և միայն ի միջոցաւ իր խաղաղութեան ժամանակին՝ հոմարեալ երջանիկ տուջնորդ, վախճանեալ յամին 1800:

ԺԷ. Տէր Յովնանու իշխանիւցի՝ եղբայրացի, (մի կամայեալ պատու) այր սրտաւոր և ժողովրդասէր, տարաբար ի մասին վիճակաւորութեան, զի ի սրտ աւուրս և ոչ սակաւ վիշտ միտ և արկած խաղացեալ ընդ զլիւթ Չուլլու, ի պատճառս կորուսեալ զան ծուց յարբունի դանձարանէ, զոր այլազգիք գողացեալ հետքն նշանակեցին արկին ի Հայ դործաւորս Դրան արքունի, որով մարթէր սաստիկ եղբայր Յովնան Շահի ընծայեմ լինիլ Չուլլույնոց՝ ըստ բանին թէ ուր գոցի գողներն, ընծայեց զընտելիս տեղոյն՝ եթէ խնամքն Աստուծոյ չիցիւր զօրաւոր ճանդիւղեալ ան:

անուամբ տուրք հաւաքելու մինչև որ երեսփոխանական ժողովը վճռած չըլլայ զայն: Քաղաքական ժողովը այս առարկութեանը դէմ դանդաղ օրինաւոր պատճառներ յառաջ կըբերէ կըսեն. որոյ զլիւթութեամբ ամենին դրամ չունենալն է, և որովհետեւ անոնց դրամոյ՝ անկենդան մարմին մի կըհամարուի Վարչութիւնը. ուստի իւր պարտքն է աշխատիլ՝ ուր և է կերպիւ դրամ հարկել. որպէսզի կարող ըլլայ ազգային զործքերը կարելի եղածին չափ կատարել յայտնի ցաւալի կացութեան մի մէջ. որ երթալով կըվաւորեալանայ: Վահմանագրական բախնդրութիւններ ընելով՝ կարծեմք թէ ազգային այժմեան յուսահատական կացութեանը դարման մի չըլլար. այլ միտաբանութեամբ և սիրով աշխատելու է, որ Վարչութեան հրատարակելու շրջաբերականէն քիչ կամ շատ արդիւնք մի գոյանայ. ապա թէ ոչ, հարկ պիտի ըլլայ, կըսեն, պատրիարքարանը զոյցել ի նախատինս ազգին. . . :

Հայանի է որ ասանկէնդ օրէ ի վեր քուէնան կըտրիէ Վ. Պօլսոյ մէջ և բաւական հարուածներ կընէ թէ ի մայրաքաղաքը և թէ անոր արուարձանաց մէջ:

Կայսերական կառավարութիւնը այս ստակալի ախտին առաջը աննշու համար և քուէնայէն բոնուող ազգասաց դարման և օգնութիւն մատուցանելու համար, մարդասիրական ոգով փութացաւ ամեն հնարաւոր միջոցները և կարգադրութիւնները ի զործ դնել: Ուստի նախ և յառաջ բժշկական յանձնաժողով մի կազմել տուաւ նախագահութեամբ վեսմափայլ Մէհմեթ փաշային որ ուստիկանութեան անտու է:

Այս յանձնաժողովը, որ ամեն օր ուստիկանութեան պաշտօնատունը պիտի դուրսարուի, հետեալ բժշկաներէ բաղկացեալ է.

- Տօբթօր Սափա՝ փոխանորդ նախագահ,
- Տօբթօր Ստեփան՝ Վէյ Լսանեան,
- Իսրուանի՝ Վէյ Իբրուհիմ,
- Սուլեյմանի,
- Կալէնի,
- Ռոզմաթօ:

Այդպէս քաղաքի ամեն իշխանութեանց յատուկ հրամաններ յուղարկուեցան բարձրագոյն Մեծ-Իսկանդրի կողմանէ, որպէսզի ամենայն զբոլթք զործակից ըլլան յիշեալ յանձնաժողովոյն, և անոր ամեն կարգադրութիւնները անյապաղ ի զործ դրնեն: Այս կարգադրութիւններն են՝ Վ. Պօլսոյ և անոր արուարձանաց փողոցները մաքրել, վնասակար միջոցներ և վնասակար կանանչեղեններուն վաճառումը արգիւիլ և այլն, և այլն: Բայց յայտնէ բժշկական յանձնաժողովը առժամանակեայ երեք

պարտ ողջակիցացն լանտաօր հօտի, թէի արք քանի մի ի զործաւորացն ի բուսի և ի թողաւոր ճարտարացն, և ինքն սեպտեմբր՝ պատկաւ գիւնան իւր անմիջեալ յամին 1817:

ԺԸ. Տէր Կարապետ Չուլլույն՝ կախիկաւոր, այր խաղաղութիւն հեղափոխութեան երկիւղած և ընտել յանդադմանայ տառապալ ժողովրդոց, և սիրելի յաջ հոմարէն Գիւնայեալ և իշխանաւորաց քաղաքացի, յորոյ և բազում անգամ սրտակաւ սկստիս սրտիւք: Յուսոս արա՛ւ անագորոյն արքիւն ոմն հոմն Հոյսի խոմ, ի տանի քաղաքի անձայնեալ լուսային եւելալայ՝ մուտ յԱպազան քաղաք գործեալ, և փոխադարձեալ ինքեան զԱրքայ իւր գաւառագետն տեղոյ, տակաւ առ տակաւ վերանայ յոտարձան չարութեան, ի կողմ իւր հաւաքեալ զհազարաւոր այրածիս տոհմականացն, ստանէ զգիւնայն և կալնու բուսն զօրութեամբ զիշխանութիւն քաղաքին, յլանայ չար խաղաղութիւն մը տայն՝ կապիւթ թագ ի գլուխ և բանայն ի վերայ հոմարէն քաղաքացոյ՝ ընդ լծով ծանր ծանր տուգանաց լիլ զանկենսեան, զոչ անտայոց հրամանէն՝ ազումիլա յերկուս յօտանէ մասն, ահա՛ դու և սարաւի յամենայն վիճակ արկեալ, կալնաւորէ՛ բանտէ, չղթայալ կապ տանիլ մեռուցանէ և որպէս չուն անարգ քաղ ի քաղ ի տես մարդկանց թաւալէ, ու՛մ կամի ողորմի՛ և ու՛մ կամի խառնայ, չգտանի որ ունող զառաջն, ուր վառն լերինք՝ անգամ ի համբաւ, թող թէ տեսնան սարսիլն:

(Մնացորդը յաջորդ բնով):

Հիւանդանոց հաստատեց, մէկը ի Կասրմիշա երկրորդը ի Վէյլթաշ և երրորդը ի Նինի-դի: Հաստակ բժշկներ ևս որոշուեցան որ յիշեալ հիւանդանոցայ մէջ բուժելու և անոնց զարման տանին:

Կայսերական կառավարութեան խնամքը և յանձնաժողովոյն անօրէնութեամբ 500 վրան կանգնեցան Վ. Պօլսոյ շրջակայ բարձանց վերայ. ուր կը փոխադրուին քուէնայէն բոնուող ազգատ հիւանդաց ընտանիքը, նմանապէս նեղ ախուրանք և խոնրու մէջ խուսն բաղմութեամբ բնակող ժողովուրդեան մէկ մասը: Ասոնց ամենուն այլև ուրիշ կարեւորաց, Բարձրագոյն Իրան մարդասիրական դիմութեամբ անգլիարար ու առատ կերակուր կըբաժնուի այսինքն. հայ, միս, բրինձ, կողի և այլն:

Ինքիւր մէջ ևս, ուր քուէնային հարուածները կըշարունակուին, մեր ընդհանուր կառավարիչ վեսմափայլ Իշխա փաշային յորդորանքը, բժշկական և դրամական օգնութեան յանձնաժողով մի կազմուեցաւ. ինչպէս որ Արշալուսոյ նախնիաց թուոյն մէջ հրատարակեցինք:

Կորին Վեսմափայլ փութացաւ 30 հազար դուրուշ նուիրելու յիշեալ յանձնաժողովոյն, որուն ուրիշ դանաճան անձերէ ընդունած նուէրներն ալ մէկ անգ հաշուելով, կարծեմք թէ 150 հազար դուրուշ չափ ժողովուած է: Այս դուրուշ մեծարգոյ միտոր Հէնսըն սեղանաւորին յանձնուեցաւ, որ բժշկական և դրամական օգնութեան յանձնաժողովոյն զանապետ ընտրուած է:

Վեսմափայլ Իշխա փաշային հոգատարութեամբ 200 վրան հասաւ ի Վ. Պօլսոյ, զորս յանձնաժողովոյն անօրէնութեամբ պատշաճաւոր տեղուանք կանգնուեցան ի պէտս ազգատ հրէից, որոնք խանրու մէջ խոնեալ կըբնակին: Բայց յայտնէ վարպետ բժիշկներ որոշուեցան, որոնք ամեն օր հրէից թաղերը այցելութեան կերթան և հարկաւոր եղած դարմանները կըմատուցանեն ազգատ հիւանդաց, դրամական օգնութիւններ ևս մատուցանելով անոնց, ըստ անօրէնութեան յանձնաժողովոյն:

Վըլսեմ, թէ հետեալ դիւանոր բժիշկներն ևս այսինքն պարտաւր ի. յաւաք, Վ. Պօլսոյ, Վ. Պօլսոյ, մարդասիրական ոգիէ շարժեալ մեծ հոգ կըտանին քուէնայէն բոնուող ազգատ հրեաներուն վերայ և իրենց արհեստին օգնութիւնները ձրաբար մատուցանել ի դատ, ամեն կերպիւ կըվսիթարեն զինքնէրը:

Այլև անցեալ կիրակի օրէ սկսեալ, Կասրմիշա կողմած ընդարձակ թաղք ամեն օր կէսօրին սեղան կըբուրի, ուր ամեն ազգի ազգատները, արք և կանայք կերթան կերակուր կուտեն, որ է ճերմակ հաց, խաշած միս և թան, այսինքն չօրպա:

Ասոնցմէ ի դատ, իւրաքանչիւր ազգի զլիւսաւորները՝ ըստ պահանջման այժմեան ցաւալի պարագայից, կարելի եղածին չափ մասնաւոր օգնութիւններ կընեն իրենց ազգատոցը:

Ինքիւր Հայոց երեւելիներն ևս այս շարժում մէկ երկու տնոյմ ազգային առաջնորդարանը դուրսուեցան, և ժողով ընելով նախագահութեամբ մեր առաջնորդական փոխանորդ խոհմափայլ տէր Վեթիկ վարդապետին, որոշեցին Հայ կարօտեւոց կերակուր բաժնել առայժմ մինչև վեց օր: Եւ այս բարեպաշտական աշխատութիւնը անձամբ ի զործ դնելու համար յանձնաժողով մի կազմուեցաւ բաղկացեալ ազգաւոր և զործունեայ անձինքներէ, որոց ձեռամբ ազգային առաջնորդարանէն 350 չափ Հայ ազգատ ընտանեաց՝ անցեալ երեքշաբթի օրէ սկսեալ, կերակուր կըբաժնուի, այսինքն մարդ զլուս օրական 100 տրամ ալիւր, 80 տրամ միս և 30 տրամ բրինձ:

Ի նպաստ այս ծախուց, որոշուեցաւ նաև դրամական հանգանակութիւն մի բանալ և ձեռնահաս անձանց օգնականութիւնը խնդրել ի միջնորդութիւն ազգային ազգատաց և կարօտեւոց:

Այսպիսի Աստուածահաճոյ ձեռնարկութեան գործարար անձնանքը աշխուկանաց ջանքը յիշելի մեծ գովութեան և երախտագիտութեան արժանի է, ուստի կըյուսամք թէ իւրաքանչիւր Հայ, ըստ իւր կարողութեան, յոժարամիտ պիտի փութայ, դրամական ուր և է նուէրով մի, նպաստամատոյց ըլլալ այս ազգասիրական բարեգործութեանը:

ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՄՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ